ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/32-1>>

ք. Երևան

<<26>> << 05 >> 2017թ.

Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը , ի դեմս գործերի կառավարիչ՝ Վ.գրիգորյանի, որը գործում է ՀՀ Նախագահի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Սմարթլայն>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Տ.Ղարիբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված՝ **գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **1 963 800** (մեկ միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017 թ. :

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության **2 օրինակ (Հավելված N 4)** և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից **10 օրյա ժամկետում** Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել

գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ Նախագահի աշխատակազմ	«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
Ք., Երևան, Բաղրամյան 26	ք. Երևան, Վարդանանց 110
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.	<< Հայէկոնոմբանկ >> ԲԲԸ
Հ/Հ 900011204089	Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 00006505	ՀՎՀՀ 01548908
Գործերի կառավարիչ՝	**Տնօրեն՝**
Վ. Գրիգորյան-----------	**Տ. Ղարիբյան**-----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
<<26>> << 05 >> 2017թ. կնքված
N ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/32 -1 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

Հ/Բ	Անվանումը	Չափի միավորը	Տեխնիկական բնութագիր	Քանակը
1	Թուղթ A-4	տուփ	A4,չկավճած էֆկալիպտե թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված: Խտությունը՝ առնվազն 80 գ/մ2 (առանց շեղումների) Չափերը՝ 21.0X29.7 մմ. (առանց շեղումների) Առանց փայտային խեժի և գազանման քլորի պարունակության: Նախատեսված՝միակողմանի և երկկողմանի տպագրության համար Պիտանի՝լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ, Պայծառությունը՝ 105%, Հաստությունը՝ 108մկմ,Անթափանցելիությունը՝ 94%-ից ոչ պակաս Անհարթությունը (шероховатость) ոչավել՝ 180մլ/ր՝ Խոնավությունը՝3,5-4,5%, Արխիվային պահպանման ժամկետ՝ ոչ պակաս քան 150 տարի,Օդի անցանելիություն՝ 1700 մլ/ր,Գործարանային փաթեթավորմամբ Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների),Մեկ տուփի քաշը՝ 2,5 կգ Եվրոպական արտադրության,ISO 14001, ISO 9706, ISO 17025, ISO 11475, OHSAS 18001, FSC, PEFC, ECF ստանդարտներին համապատասխան (անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ)Տոքսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3% Ֆենոլի պարունա-կություն՝ ոչ ավել քան 0,001 մգ/մ3 Ֆորմալդեգիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ3:Անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ մասնագրերը արտադրողի կողմից հավաստող նամակ-գրություն՝ ուղղված մատակարարի անունով: Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի օրիգինալության հավաստագիր (Certificate of Origin) Pioneer	925 /ինը հարյուր քսանհինգ/

2	Թուղթ նշումների սոսնձվածքով	տուփ	Թուղթ նշումների համար, գունավոր, կպչուն, 7.6 x 7.6 սմ չափերի, տրցակներով, տուփը 100 թերթ:	500 /հինգ հարյուր/
3	Գրիչ գնդիկավոր	հատ	Տարբեր գույներ / Cello, finegrip Գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով:	1 595 /հազար հինգ հարյուր ինքսունհինգ/
5	Մատիտ	հատ	Մատիտ՝ HB կոշտության գրաֆիտե միջուկով, փայտյա կամ փայտին փոխարինող նյութից պատրաստված, հետևի մասում՝ ռետին: Skyglory	300 /երեք հարյուր/
6	Կարիչ միջին	հատ	Գրասենյակային կարիչ, 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	15 /տասնհինգ/
7	Կարիչ մեծ	հատ	Գրասենյակային կարիչ, 50-ից ավելի թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	5 /հինգ/
10	Ռետին	հատ	Ռետին բարձր որակի, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար, գույնը սպիտակ, չափը 4*2*1 սմ	75 /յոթանա-սունհինգ/
12	Թղթապանակ 2 օղակով	հատ	Թղթապանակ կոշտ կազմով (ռեգիստր) A4 ֆորմատի, երկու O-ձև օղակներով, հաստությունը 4 սմ:	50 /հիսուն/
14	Գրասենյակայ ին գիրք, մատյան	հատ	գրասենյակային գիրք, մատյան, 100 թերթ (200էջ), տողանի, սպիտակ էջերով, A4 ֆորմատի	45 /քառա-սունհինգ/
17	Սրիչ մատիտի	հատ	Սրիչ բարձր որակի, գրաֆիտե միջուկով մատիտի համար, սրելուց առաջացած մնացորդներ հավաքման տարայով:	30 /երեսուն/
19	Մարտկոց (էլեմենտ) AA	հատ	Sony Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար,1.5վ, AA ալկալիական, առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով:	290 /երկու հարյուր իննսուն/
20	Մարտկոց (էլեմենտ)AAA	հատ	Sony Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար,1.5վ, AAA ալկալիական, առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով:	70 /յոթանասուն/

23	Սեղանի եռահարկ թղթադարակ	հատ	Պլաստմասե, 3 նիստով, նախատեսված A4 (210 x 297) մմ ձևաչափի թերթերի համար:	10 /տաս/

* Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք.Երևան, Բաղրամյան 26 հասցեով:

ԳՆՈՐԴ
ՀՀ Նախագահի աշխատակազմ
Ք., Երևան, Բաղրամյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505
Գործերի կառավարիչ՝

Վ. Գրիգորյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
<< Հայէկոնոմբանկ >> ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն՝

Տ. Ղարիբյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
<<26>> << 05 >> 2017թ. կնքված
N ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/32 -1 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2017թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Թուղթ A-4	տուփ	1 720	-		460	791 200	465	799 800	-		925	1 591 000
2	Թուղթ նշումների սոսնձվածքով	տուփ	115	-		250	28 750	250	28 750	-		500	57 500
3	Գրիչ գնդիկավոր	հատ	60	-		790	47 400	805	48 300	-		1595	95 700
5	Մատիտ	հատ	50	-		150	7 500	150	7 500	-		300	15 000
6	Կարիչ միջին	հատ	900	-		10	9 000	5	4 500	-		15	13 500
7	Կարիչ մեծ	հատ	4000	-		5	20 000	-		-		5	20 000
10	Ռետին	հատ	70	-		50	3 500	25	1 750	-		75	5 250
12	Թղթապանակ 2 օղակով	հատ	550	-		25	13 750	25	13 750	-		50	27 500

14	Դրասենյակային գիրք. մատյան	հատ	540	-		20	10 800	25	10 800	-		45	24 300
17	Սրիչ մատիտի	հատ	65	-		30	1 950	-		-		30	1 950
19	Մարտկոց (էլեմենտ) AA	հատ	260	-		140	36 400	150	39 000	-		290	75 400
20	Մարտկոց (էլեմենտ)AAA	հատ	260	-		30	7 800	40	10 400	-		70	18 200
23	Սեղանի եռահարկ թղթադարակ	հատ	1 850	-		-		10	18 500	-		10	18 500
Ընդամենը				X		X	**978 050**	X	**985 750**	X		X	**1 963 800**

ԳՆՈՐԴ
ՀՀ Նախագահի աշխատակազմ
Ք., Երևան, Բաղրամյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505
Գործերի կառավարիչ՝

Վ. Գրիգորյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
<< Հայէկոնոմբանկ >> ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն՝

Տ. Ղարիբյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
<< 26 >> << 05 >> 2017թ. կնքված
N ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/32 -1 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Թուղթ A-4	-	-	-	-	791 200	791 200	1 591 000	1 591 000	1 591 000	1 591 000	1 591 000	1 591 000	**1 591 000**
2	Թուղթ նշումների սոսնձվածքով	-	-	-	-	28 750	28 750	57 500	57 500	57 500	57 500	57 500	57 500	**57 500**
3	Գրիչ գնդիկավոր	-	-	-	-	47 400	47 400	95 700	95 700	95 700	95 700	95 700	95 700	**95 700**
5	Մատիտ	-	-	-	-	7 500	7 500	15 000	15 000	15 000	15 000	15 000	15 000	**15 000**
6	Կարիչ միջին	-	-	-	-	9 000	9 000	13 500	13 500	13 500	13 500	13 500	13 500	**13 500**
7	Կարիչ մեծ	-	-	-	-	20 000	20 000	20 000	20 000	20 000	20 000	20 000	20 000	**20 000**

10	Ռետին	-	-	-	-	3 500	3 500	5 250	5 250	5 250	5 250	5 250	5 250	**5 250**
12	Թղթապանակ 2 օղակով	-	-	-	-	13 750	13 750	27 500	27 500	27 500	27 500	27 500	27 500	**27 500**
14	Գրասենյակային գիրք, մատյան	-	-	-	-	10 800	10 800	24 300	24 300	24 300	24 300	24 300	24 300	**24 300**
17	Սրիչ մատիտի	-	-	-	-	1 950	1 950	1 950	1 950	1 950	1 950	1 950	1 950	**1 950**
19	Մարտկոց (էլեմենտ) AA	-	-	-	-	36 400	37 700	75 400	75 400	75 400	75 400	75 400	75 400	**75 400**
20	Մարտկոց (էլեմենտ)AAA	-	-	-	-	7 800	7 800	18 200	18 200	18 200	18 200	18 200	18 200	**18 200**
23	Սեղանի եռահարկ թղթադարակ	-	-	-	-	-	-	18 500	18 500	18 500	18 500	18 500	18 500	**18 500**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ԳՆՈՐԴ
ՀՀ Նախագահի աշխատակազմ
Ք., Երևան, Բաղրամյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505
Գործերի կառավարիչ՝

Վ. Գրիգորյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
<< Հայէկոնոմբանկ >> ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն՝

Տ. Ղարիբյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4
<<26>> << 05 >> 2017թ. կնքված
N ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/32 -1 *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ
«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
<< Հայէկոնոմբանկ >> ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն՝

Պատվիրատու
ՀՀ Նախագահի աշխատակազմ
ք.Երևան, Բաղրամյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌԲԲԵՐՄԱՆ***

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «26» «05» 2017 թ.

Պայմանագրի համարը՝ N ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/32 -1

Պատվիրատուն՝ ի դեմս գործերի կառավարիչ՝ Վ.Գրիգորյանի և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս Ընկերության տնօրեն Տ.Ղարիբյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
<<26>> << 05 >> 2017թ. կնքված
N ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/32 -1 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Նախագահի աշխատակազմի (այսուհետ՝ Գնորդ) և «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2017թ. <<26>> << 05 >> -ին կնքված N ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/3-17/32 -1 գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն